Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 28.11.2019թ. թիվ 1910495761 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<<25>> 12 2019թ. 17/13 -10948 ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Զորայր Կարապետյանի ՄԴ/5414-19 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Երևան քաղաքի Երզնկյան փողոցի 4 շենքի 11 բնակարանի բնակիչ Զորայր Կարապետյանը դիմումով խնդրել է վերանայել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 1910495761 որոշումը՝ նշելով, որ երեխային դպրոց բերելու պատճառով է կանգառ կատարել, քանի որ ազատ կայանատեղի մոտակայքում չկա:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ դիմումատուի փաստարկը չի կարող վարչական ակտը վերանայելու հիմք հանդիսանալ հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած **տեսանյութն է կամ լուսանկարը**:

ՀՀ կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 80-րդ կետի համաձայն՝ տրանսպորտային միջոցը տեղակայել թույլատրվում է երթևեկելի մասի **եզրին զուգահեռ մեկ շարքով**՝ բացառությամբ այն տեղերի /երթևեկելի մասի տեղային լայնացում/, որտեղ գծանշմամբ թույլատրված են տրանսպորտային միջոցների դասավորման այլ ձևեր: Նույն որոշման **25-րդ** կետի համաձայն՝ արգելվում է առավելություն ստանալու, ինչպես նաև կանգառն արգելված վայրերում կանգառ կատարելու (բացառությամբ հարկադրված կանգառի) նպատակով **վթարային ազդանշանի օգտագործումը:**

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 39-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 21-րդ և 25-րդ մասերով (միայն կանգառ կատարելու մասով) նախատեսված վարչական իրավախախտումն ունի նվազ նշանակություն այն դեպքում, երբ կանգառը կատարվել է **միայն ուղևորների նստելու կամ իջնելու նպատակով, չի գերազանցել մեկ րոպե ժամանակահատվածը, և դրա հետևանքով երթևեկության մյուս մասնակիցների**

համար խոչընդոտ կամ վթարային իրադրություն առաջացնելու ակնհայտ վտանգ չի ստեղծվել:

Իրավախախտման PIN անհատական ծածկագրի տակ զետեղված տեսանյութի դրվագային ուսումնասիրությունն ակնհայտ է դարձնում այն փաստը, որ դիմումատուին պատկանող տրանսպորտային միջոցը 14.11.2019թ. ժամը 13:20-ին Երևան քաղաքի Երվանդ Սայաթ-Նովա-Տերյան փողոցների խաչմերուկի հատվածում, մասնավորապես Տերյան փողոցում կանգառ է կատարել երկրորդ շարքով՝ 13:20:14-րդ վայրկյանից 13:21:34-րդ վայրկյանը ներառյալ, որի տևողությունը կազմել է 80 վայրկյան:

Այսպիսով, հիմնավորվել է, որ Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 1910495761 որոշումն իրավաչափ է և օրինական:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1.Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 28.11.2019թ. թիվ 1910495761 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

3.Սույն որոշման օրինակն ուղարկել Զորայր Կարապետյանին:

Ե.Կարապետյան

Կատարող Ա.Օսիկյան
Հեռ.՝ 011 544-783